

**Իրանահայ համայնք**

← (7-24 մայիսի 2012թ.) կարճ ժամանակ անց, Անթիլիասի գահակալը հրահանգում է Սպահանի ՀԹ առաջնորդին՝ Այսուհետ բոլոր եկեղեցական արարողությունների ընթացքում՝ Արամ Ա կաթողիկոսին «Ամենայն հայոց» տիտղոսվ հիշել:

Ի վերուստ եկած հրամանն այս անգամ տրվում է քահանաներին եկեղեցիներում հայտարարելու և գործադրելու համար և այդպես էլ լինում է: Բայց ո՞վ է տեսել մի երկիր երկու թագավոր ունենա, նույն եկեղեցին՝ երկու գլուխ:

Իսկ ոնց են սխալն արդարացում.

Մայիսի 22-ին Թեհրանի Հայ համալսարանների ընդհանուր միությունում կազմակերպված հանդիպման ընթացքում Արամ Ա կաթողիկոսը հայտարարեց.

«Ամենայն հայոց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս», այս արտահայտությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մեջ հինն է ի վեր կգործածվե, Պատարագի մեջ կգործածեն, զանազան տեղեր կգործածեն, որը նշանակում է՝ Մեծի Տանն Կիլիկիո բոլոր հայերու»:

Բայց միթե՞ այսօր Կիլիկիա անունով հայաբնակ աշխարհագրական տարածք կամ երկիր գոյություն ունի, որի ողջ հայության կամ ամենայն հայոց մասին խոսք բանանք, որ հետո էլ բացատրենք, թե՞ «Ամենայն հայոց Մեծի Տանն Կիլիկիո» նշանակում է «Մեծի Տանն Կիլիկիո բոլոր հայերու»:

Այս հարցը յուրաքանչյուր անգամ երբ Արամ կաթողիկոսը Իրան էր այցելում ինչ-որ կերպ բարձրացվում էր, իսկ այս վերջին այցի ժամանակ այն շատ թեժացավ և անգամ Ամենայն հայոց կաթողիկոսի մամլո խոսնակ Ս. Վահրամ քին. Մելիքյանն այդ կապակցությամբ հայտարարեց, որ. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ պահվածքը, որով փորձվում է արհեստական շփոթ առաջացնել և այսկերպ լարվածություն առաջ բերել ներեկեղեցական և հանրային կյանքում»:

1995-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Տանն Կիլիկիո «երկու կաթողիկոսություններն ալ համարժեք են և հաւասարագործ» հայտարարելը, 2002 թվի հունվարին Կանադայում անթիլասական հակաթոռ թեմ հաստատելը, Արամ վեհափառին Իրանի պետական այրերի, կառույցների և հասարակայնության մոտ «Ամենայն հայոց կրոնապետ» ներկայացնելը, Թեհրանի թեմի եկեղեցիներում Ս. Պատարագի ընթացքում Վեհին «Ամենայն հայոց» տիտղոսով հիշելը և ահա Սպահանի հայոց թեմին առաքված հրահանգը այդ կապակցությամբ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ յուրաքանչյուր հայորդու մտքում, կամա-ակամա, առաջ է բերում այն հարցը, որ մինչև ո՞ր են հասնելու Տանն Կիլիկիո սահմանները, արդյոք 1956 թվից սկիզբ առած երկպառակտումը շարունակելով Անթիլիասը ձգտում է վերածվել հակաթոռի :

Մեր խոսքն ավարտենք Հայ Եկեղեցու երանկիներից մեկի Ս. Ներսես արք. Մելիք Թանգյանի բառերով.

«Հայոց կաթողիկոսին է յատկացրած «Ամենայն Հայոց» տիտղոսը, Աղթամարի և Սսի կաթողիկոսները իբրև թեմակալ առաջնորդների շրջան ունեցողներ՝ կոչում են «տանն Կիլիկիոյ և Աղթամարայ» կաթողիկոսներ»:

Ասել է թե՞ «Ամենայն Հայոց» տիտղոսը չի կարելի օգտագործել քահանաճորեն, որքան էլ, որ Տանն Կիլիկիո կաթողիկոսը լինի, կամ լինեք զգնիվ:

1- «Հայոց եկեղեցական իրաւունքը», Ներսես արք. Մելիք-Թանգյան, էջ 810, հրատարակություն՝ ԹՀԹ Քրիստոնեական դաստիարակության բաժանմունքի:

Հ.Գ. Իրանահայ երեք թեմերի եկեղեցիներում, Ս. Պատարագի ժամանակ, նախապես միայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահակալի համար էին օգտագործում «Ամենայն Հայոց» տիտղոսը, իսկ այժմ՝ Անթիլիասի հրամանով, Արամ կաթողիկոսը նաև հիշվում է այդ տիտղոսով, շփոթ ստեղծելով հայ հասարակության մտքում:

Նախկինում՝

Աշխարհաբար

41

Կոստանդիանոսի, Տրոասի և Թեոդոսների և բարեպատ բազմաթիւների և ասուածասեր իշխանների յիշատակութիւնը ևս լինի այս սուրբ պատարագի մէջ:

Դպ. Յիսիւր Տէր, և ողորմիր:

Միկ. Ընդհանուր բոլոր հաւատացեալների, մարդկանց և կանանց, ծերերի և մանուկների, հաւատով և սրբութեամբ Քրիստոսով ճնշող բոլոր չափահասների յիշատակութիւնը ևս լինի այս սուրբ պատարագի մէջ:

Դպ. Յիսիւր Տէր, և ողորմիր:

Մինչևիտ սարկաւազը Աւայելոցն է ասում Քանանան լուղևան աղօթում է:

Քննյ. Յիսիւր Տէր և ողորմիր և օրհնիր քո սուրբ կարողիկէ և առաքելական եկեղեցին, որը փրկեցիր քո Միածնիդ պատական արիւնով և ազատեցիր սուրբ խաչով, Շեռհիւր սրան (եկեղեցուն) անբաժ խաղաղութիւն, Յիսիւր Տէր և ողորմիր և օրհնիր բոլոր ուղղափառ Եպիսկոպոսներին որոնք ուղիղ վարդապետութեամբ պարզում են մեզ նեմարտութեան խօսքը: Միկ. Օրհնիր Տէր.

Քննյ. (Բարձրաձայն) Առաւելապէս (Յիսիւր) մեր և պիսկոպոսապետի և համայն Հայոց պատական Հայրապետի Տէր Տէր ..... սրբազնագոյն կաթողիկոսին, և Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին Տէր Տէր ..... սրբազնագոյն կաթողիկոսին. և մեր վիճակի բարեխնամ Առաջնորդ Տէր ..... Եպիսկոպոսին (Վարդապետին) երկար օրեր շնորհիր, որոնք ուղիղ քարոզութեամբ սովորեցնում են մեզ Ասուածային խօսքի նեմարտութիւնը:

Դպ. Ամեն:

Սարկաւազը սեղանը համբուրելով անցնում է սեղանի ձախակողմը և բարձրաձայն ասում է.

«Քննյ. (Բարձրաձայն) Առաւելապէս (Յիշիւր) մեր եպիսկոպոսապետին և ամենայն Հայոց պատական հայրապետին՝ Տէր Տէր ..... սրբազնագոյն

Կաթողիկոսին, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին՝ Տէր Տէր ..... սրբազնագոյն Կաթողիկոսին, եւ մեր վիճակի բարեխնամ Առաջնորդ Տէր ..... Եպիսկոպոսին (Վարդապետին) երկար օրեր շնորհիր, որոնք ուղիղ քարոզութեամբ սովորեցնում են մեզ Աստուածային խօսքերի ճշմարտութիւնը»:

«Պատարագամատոյց», Թեհրան 1986թ., էջ 41: Հրտ. Տ. Արտակ արք. Մանուկյանի հրամանով:

Այժմ՝

Սարկոսազը գալով բեմի մէջտեղ, ասում է.  
Արկ. Այս սուրբ Պատարագում նաեւ համընդհանուր կերպով յիշիր բոլոր հաստատեցեղներին՝ տղամարդկանց ու կանանց, ծերերին ու մանուկներին եւ ամէն չափի ու հասակի անձանց, որոնք հաստքով եւ սրբութեամբ Յիսուսին միացան ու ննջեցին:  
Դպ. Յիշիր Տէր, եւ ողորմիր:  
Մինչ նրանք երգում են Քաղօգը, Քահանան ծածուկ աղօթում է. Սուրբ Ընդհանրական եւ Առաքելական Եկեղեցու կայուն խաղաղութեան, եւ բոլոր ուղղամաստ Եպիսկոպոսների համար, որոնք մեզ ուղիղ կերպով ուսուցանում են հաստքի ճշմարիտ խօսքը:

**ԿԱՆԳՆԵԼ**

Քննչ. Առաւել եւս յիշիր մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց պատական հայրապետին՝ Տէր Տէր Գարեգին շնորհազարդ Կաթողիկոսին ու նաեւ մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Տէր Տէր Արամ շնորհազարդ Կաթողիկոսին, եւ մեր Թեմի Առաջնորդ Տէր Սեպուհ Սրբազան Եպիսկոպոսին: Ծնորհիր, որ երկար օրեր ստաջնորդեն մեզ ուղիղ վարդապետութեամբ:  
Արկ. Գոհութիւն եւ փառաբանութիւն ենք մատուցում քեզ, ով մեր Տէր Աստուած այս սուրբ եւ անմահ Պատարագի համար, որ դրամ է Սեղանի վրայ: Ծնորհիր մեզ, որպէսզի սրբեւնք ու կենդանանանք: Սրանով սէր, հաստատութիւն եւ ըղձախ խաղաղութիւն շնորհիր ամբողջ աշխարհին, սուրբ եկեղեցու, բոլոր ուղղամաստ Եպիսկոպոսներին, մեր Եպիսկոպոսապետին եւ Ամենայն Հայոց պատական Հայրապետին Տէր Տէր Գարեգին սրբազնագոյն Կաթողիկոսի ու նաեւ մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետին Տէր Տէր Արամ սրբազնագոյն Կաթողիկոսին եւ մեր թեմի ստաջնորդ Տէր Սեպուհ Սրբազան Եպիսկոպոսին եւ քահանային, որ այս Պատարագն է մատուցում:

- 53 -

«Քննչ. Առաւել եւս յիշիր մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց պատական հայրապետին՝ Տէր Տէր Գարեգին շնորհազարդ Կաթողիկոսին ու նաեւ մեր Եպիսկոպոսապետ եւ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ Տէր Տէր Արամ շնորհազարդ Կաթողիկոսին, եւ մեր թեմի Առաջնորդ Տէր Սեպուհ Սրբազան Եպիսկոպոսին: Ծնորհիր, որ երկար օրեր ստաջնորդեն մեզ ուղիղ վարդապետութեամբ»:

«Պատարագամատոյց», Թեհրան 2000թ., էջ 53: Հրտ. Տ. Սեպուհ Եպիսկ. Սարգսյանի հրամանով:

**Հայաստան**



**Ամփոփվել են ԼՂՀ նախագահի հուլիսի 19-ի ընտրութեան նախնական արդյունքները**



Հուլիս 21, 2012

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հուլիսի 20-ի նիստում, ԼՂՀ ընտրական օրենսգրքի համաձայն, տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված արձանագրությունների հիման վրա, ամփոփվել եւ արձանագրությամբ վավերացվել են ԼՂՀ նախագահի հուլիսի 19-ի ընտրության նախնական արդյունքները: Այդ մասին NEWS.am-ին տեղեկացրին ԼՂՀ ԿԸՀ-ից:

Ըստ ԿԸՀ-ի արձանագրության, ԼՂՀ 99227 ընտրողներից քվեարկությանը մասնակցել են 72958-ը: Բակո Սահակյանի օգտին քվեարկել են 47095, Վիտայի Բալասանյանի օգտին՝ 22967, Արկաղի Սողոմոնյանի օգտին՝ 593 ընտրողներ: 2302 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր: Անճշտությունների չափը՝ 4:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր NEWS.am-ը, հուլիսի 19-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայացել են նախագահական ընտրությունները:

Հիշեցնենք, որ պետության ղեկավարի պաշտոնի համար պայքարում էին երեք թեկնածուներ՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի Արցախի մասնաճյուղի գիտաուսումնական գծով պրոռեկտոր Արկաղի Իվանի Սողոմոնյանը, ԼՂՀ Ազգային ժողովի անկուսակցական պատգամավոր Վիտայի Միխայիլի Բալասանյանը եւ գործող նախագահ Բակո Սահակյանը:

ԼՂՀ-ի նախագահի նախորդ ընտրությունները տեղի էին ունեցել 2007 թվականի հուլիսի 19-ին: Նախագահ էր ընտրվել Բակո Սահակյանը, որը, ըստ պաշտոնական տվյալների, հավաքել էր 85.12 տոկոս ձայն:

**Միջազգային դիտորդներ. Ընտրությունները  
Ղարաբաղում մաքուր են անցնում**



Հուլիս 19, 2012

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում նախագահական ընտրությունների ընթացքում նույնիսկ ամենափոքր գյուղերում ընտրատեղամասերը հագեցած են համապատասխան պարագաներով եւ պայմաններով: Այս մասին այսօր՝ հուլիսի 19-ին, Ղարաբաղում լրագրողների հետ գրույցում նշել է Սովորական քաղաքացիների կուսակցության առաջնորդ, Stop Islamization of Europe միջազգային կազմակերպության խորհրդի անդամ, Բուլղարիայի խորհրդարանի պատգամավոր Պավել Չերնեւը:

«Ինչպես հյուսիսում, այնպես էլ հարավում նախընտրական քարոզարշավը հանգիստ է ընթացել: Ինձ մոտ տպավորություն է, որ ընտրությունները մաքուր են ընթանում», - նշել է նա:

Ավստրիացի դիտորդ, «Միություն հանուն Ավստրիայի ապագայի» կուսակցության միջազգային հարցրեի դեպարտամենտի համակարգող Ալեքսանդր Շտեյզլն, իր հերթին, կարծիք է հայտնել, որ տեղի բնակիչները չեն կասկածում ընտրությունների արդարության մեջ եւ դա լիարժեք լեգիտիմություն է ապահովում իշխանությունների կողմից որոշումներ կայացնելու համար:

Նշենք, որ ԼՂՀ-ում նախագահական ընտրություններին հետեւում են 81 միջազգային դիտորդներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Կանադայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ավստրիայից, Չեխիայից, Իռլանդիայից, Լեհաստանից, Կիպրոսից, Հունգարիայից, Բուլղարիայից, Իսրայելից, ԱՖգենիստանից, Ուրուգվայից եւ այլ երկրներից, ինչպես նաեւ պաշտոնական պատվիրակություններ են ժամանել Հայաստանից, Աբխազիայից, Հարավային Օսիայից եւ Մերձդնեստրից:

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների  
հայտարարությունը Ղարաբաղում  
ընտրությունների վերաբերյալ**



Հուլիս 20, 2012

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, որոնք հանդես են գալիս որպես միջնորդ դարաբաղյան կարգավորման գործընթացում, հուլիսի 20-ին հայտարարություն են տարածել Լեռնային Ղարաբաղում կայացած նախագահական ընտրությունների վերաբերյալ:

Համանախագահների հայտարարության մեջ ասվում է.

«ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները (դեսպաններ Ռոբերտ Բրադկեն Միացյալ Նահանգներից, Իգոր Պոպովը՝ Ռուսաստանից, եւ Ժակ Ֆորը՝ Ֆրանսիայից) ուշադրություն են դարձրել Լեռնային Ղարաբաղում 2012թ. հուլիսի 19-ին կայացած «ընտրությունների» անցկացման մասին լուրերին:

Համանախագահներն ընդունում են Լեռնային Ղարաբաղի փաստացի իշխանությունների անհրաժեշտությունը՝ փորձել ժողովրդավարական եղանակով կազմակերպել բնակչության հանրային կյանքը նման միջոցառման միջոցով: Սակայն համանախագահները նշում են, որ երեք երկրներից եւ ոչ մեկը, ոչ մի այլ երկիր չի ճանաչում Լեռնային Ղարաբաղը որպես անկախ եւ ինքնիշխան պետություն:

Համանախագահներն ընդգծում են, որ հուլիսի 19-ին կայացած միջոցառումը որեւէ կերպ չի կանխորոշում Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը կամ ընթացող բանակցությունների ելքը՝ դարաբաղյան հակամարտության ամուր եւ խաղաղ կարգավորման հասնելու համար»:

**Հայաստանյան բանկերը հաշվեհամարներ չեն  
բացում սիրիահայերի համար**

15 Օգոստոսի 2012

Հայաստանյան բանկերը Միրիայից Հայաստան կապիտալ չեն տեղափոխում: Միրիահայերը չեն կարողանում հաշվեհամար բացել Հայաստանում եւ կարողությունը տեղափոխել Հայաստան:

Կոմիտաս Միրջանյանը իր ընտանիքի հետ Միրիայից Հայաստան է տեղափոխվել 2.5 ամիս առաջ:

Այնտեղ վաճառել են իրենց տունն ու ունեցվածքը, սակայն գումարը շատ դժվարությամբ, մի քանի միջնորդների օգնությամբ են Հայաստան տեղափոխել: Միրջանյանն ասում է՝ դիմել է HSBC եւ Byblos բանկեր ու մերժում ստացել:

«Պատճառաբանություն չտվեցին, ասեցին, որ հաշիվ չենք բացում հիմա, միայն ասացին, որ հիմա չի կարելի բացել: Այստեղ ես պարսկահայ հին ընկեր ունեմ, ով արդեն հայաստանցի է, ինքը հաշիվը բացեց եւ գումարը իրեն փոխանցվեց: Այսինքն փողը իմ անունով չէ, ընկերոջս անունով է», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասաց Միրջանյանը:

Արթին Առաքելյանը, տարիներ առաջ Իրանից Հայաստան տեղափոխվելով, նույն խնդրին է բախվել. որեւէ բանկում չի կարողացել հաշվեհամար բացել, մինչեւ որ չի ստացել Հայաստանի քաղաքացիություն: Նրա խոսքով՝ այստեղ բազմաթիվ սիրիահայեր եւ իրանահայեր չեն կարողանում իրենց կապիտալը Հայաստան բերել:

«Իրենք հիմա երկու կողմից խնդիր ունեն՝ թե Հայաստանում, թե Միրիայում: Միրիայից չեն կարող իրենց գումարը հանել: Մտիպված են ինչ-որ միջոցներով գումարը տեղափոխել Լիբանան, Լիբանանից միջազգային բանկերի միջոցով Հայաստան: Բայց խնդիրն այն է, որ հայաստանյան բանկային համակարգը Միրիայի քաղաքացիների համար հաշիվ բացելու թույլտվություն չունի: Դա նորից իրենց համար խնդիր է ստեղծում, որովհետեւ պիտի Հայաստանում շատ վստահելի ծանոթ, բարեկամ ունենան, որ կարողանան գումարը նրանց հաշիվների վրա փոխանցել», - ասում է Առաքելյանը:

Կենտրոնական բանկից, ի պատասխան «Ազատություն» ռադիոկայանի հարցմանը, թե ինչու են հայաստանյան բանկերը հրաժարվում հաշվեհամարներ բացել հատկապես Միրիայի եւ Իրանի քաղաքացիների համար, պատասխանեցին, որ Հայաստանի օրենսդրությամբ այլ երկրների քաղաքացիների կողմից հայաստանյան բանկերում հաշիվների բացման հետ կապված որեւէ սահմանափակում գոյություն չունի:

HayNews.am

**Տրապիզոնի նավահանգիստն արդեն օգտագործվում է հայկական բեռների փոխադրման համար**

Հուլիս 24, 2012

Տրապիզոնի նավահանգիստը փաստացի օգտագործվում է դեպի Հայաստան եւ Հայաստանից բեռնափոխադրումների իրականացման համար: Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասաց Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության «Աջակցություն հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը» ծրագրի տնօրեն Արթուր Ղազարյանը՝ ընդգծելով, որ այդ նավահանգստի օգտագործումն իրատեսական է նաեւ հետագայում: Նրա խոսքով՝ անցած տարի ամռանը հայկական երկու բեռնատարներ

տարանցիկ նպատակներով օգտվել են թուրքական տարածքից:



«Ներկայումս Թուրքիան տարեկան 200 թույլտվություն է տրամադրում TIR-ի (Transport International Rout) բեռնատարներին՝ իր տարծքով տարանցիկ փոխադրումների համար: Բայց այստեղ խնդիր կա. համաձայն թուրքական օրենսդրության, տարանցիկ փոխադրում իրականացնող վարորդը պետք է աշխատանքային վիզա ունենա: Մակայն վիզա տրամադրվում է դեսպանատը, որը մենք չունենք: Անցած տարվա երկու դեպքի համար ինչ-որ ձեռակերպումներ եղան ուկրաինական կողմի օգնությամբ», -նշեց Ղազարյանը: Մակայն խնդիրն արդեն կարելի է լուծված համարել. թուրքական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ հայ վարորդներին վիզաներ կտրամադրվեն Վրաստանում Թուրքիայի դեսպանատան կողմից:

Միաժամանակ թուրքական կողմին տրվում է 200 թույլտվություն՝ Հայաստանի տարածքով տարանցիկ փոխադրումների համար: «Եթե նախկինում նրանք վճարում էին, հիմա արդեն երկու հարյուր բեռնատարի կյոլլատրվի անվճար փոխադրում կատարել»:

Արթուր Ղազարյանը նկատեց, որ Տրապիզոնի նավահանգիստը իրական այլընտրանք է Փոթիի նավահանգստին: Բացի այդ, Տրապիզոնի նավահանգստի օգտագործումը վրացական կողմին կստիպի վերանայել իր քաղաքականությունը մրցունակության առումով:

Ինչպես տեղեկացրել էր NEWS.am-ը, Թուրքիայի Տրապիզոնի նավահանգստի տնօրեն Մուգաֆեր Էրմիշը հայտարարել է, թե Տրապիզոնի նավահանգիստը պատրաստ է սպասարկել Հայաստանից ուղարկվող եւ Հայաստան առաքվող բեռնափոխադրումները:

«Հայաստանն այս պահին 7,5 մլրդ դոլարի արտահանում եւ ներմուծում է իրականացնում Վրաստանի Փոթիի նավահանգստի միջոցով: Դեպի Փոթի երկաթգիծ կա, սակայն այն մեծ ընդմիջումներով է գործում: Երեւանից Տրապիզոն օրվա ցանկացած ժամի կարելի է հանգիստ հասնել: Տրապիզոնից մինչեւ Ալիջանի սահման (Մարգարայի անցակետ-խմբ) 400 կմ է, իսկ այնտեղից Երեւան ընդամենը 30 կմ է: Մեր նավահանգիստը պատրաստ է նման ծավալի բեռնափոխադրումներ իրականացնել», -նշել է

Տրապիզոնի նավահանգստի տնօրենը՝ շեշտելով, որ ներկա պահին նավահանգիստն աշխատում է իր հնարավորությունների 25 տոկոսի չափով:

## Արեւմտյան Հայաստան



ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
GOUVERNEMENT  
D'ARMENIE OCCIDENTALE  
BATI ERMENISTAN HUKUMETI  
ПРАВИТЕЛЬСТВО  
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

### Սիրիայի հայության իրավունքների եւ ինքնապաշտպանության իրավունքի մասին

«Մենք ուրիշ ելք չունինք. չենք կրնար կողմ ըլլալ, չենք կրնար զինվիլ, ոչ ալ գենքով պաշտպանվիլ».  
«Առաջին լրատվական»-ի նկարահանող խմբին ասել է Բերիտ թեմի Հայ Կոթողիկե եկեղեցու առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Մարիաթյանը (1in.am, 24.08.2012): Հավանաբար այսպէս մտածել եւ ասել են, հավանաբար, այսպէս խուճապ են առաջացրել նաեւ 1915-ի օրերին: Մինչդեռ ճիշտ էին նրանք, ովքեր ինքնապաշտպանության էին կոչում եւ փրկվեցին նրանք, ովքեր դիմեցին ինքնապաշտպանության:

Այսօր իրավիճակը տարբեր է, անշուշտ, սակայն խնդիրը նույնն է: Բարեբախտաբար կա սեփական իրավունքների գիտակցության եւ դրանք պաշտպանելու որոշակի ներուժ եւ վճռականություն: Վկա 1965-ից Խորհրդային Հայաստանում սկիզբ առած ազգային ազատագրական շարժումները, Գուրգեն Յանիկյանը, Նորագոյն զինյալ ազատագրական պայքարը եւ Արցախյան հաղթական ազատամարտը: Դրանք բոլորը սեփական իրավունքները հստակ գիտակցելու եւ դրանք վճռականորեն պաշտպանելու օրինակներ են:

Նախ խոսենք իրավունքների մասին:

Սիրիայի հայությունը բազմաթիվ իրավունքներ ունի, որոնցից են՝

1. որպէս Սիրիայի պետության լիարժեք քաղաքացի կյանքի, ինչքի ապահովության եւ անվտանգության իրավունք,

2. որպէս տարածաշրջանի բնիկ՝ սեփական ինքնությունը եւ ինքնատիպ մշակույթը պահպանելու եւ պաշտպանելու իրավունք,

3. որպէս Արեւմտյան Հայաստանում (ներառյալ Կիլիկիայում) ցեղասպանության եւ բռնազաղթի ենթարկված Արեւմտյան Հայաստանի հայ՝ բնօրրան հայրենիք վերադառնալու իրավունք, դրա իրավական քաղաքական բոլոր հետեւանքներով,

4. որպէս Արեւմտյան Հայաստանի հայ՝ ապագա ունենալու ու զարգանալու իրավունք, դրա իրավական քաղաքական բոլոր հետեւանքներով:

Սա ասում ենք, որպէսզի, նախ եւ առաջ, հստակեցնենք Սիրիայի հայության (եւ, ի դէպ, հին, թե նոր՝ Միջին Արեւելքի, հայության, որ նույնն է, թե Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքները), որպէսզի որեւէ մեկին չթվա, թե հայությունը մանկուրտ է, որք է, եւ որ հնարավոր է անպատիժ նրան ենթարկել ամեն տեսակի փորձությունների ու հալածանքների: Որպէսզի մենք էլ գիտակցենք, թե ինչ իրավունքներ ունենք եւ ինչպէս պետք է դրանք պաշտպանենք:

Սիրիայի հայությունը ինքնապաշտպանության իրավունք ունի.

Սիրիայի դեպքում նախ քննության առնենք հայությանը սպառնացող հիմնական մարտահրավերները: Դրանք երեքն են. առաջին, երբ Սիրիայում ներքին քաղաքական ճգնաժամ է, երկրորդ, երբ Սիրիան ենթարկվում է արտաքին ագրեսիայի եւ երրորդ, երբ Սիրիայի հայությունը, ինչպէս երկրի այլ ժողովուրդներ եւս, ենթարկվում է սադրանքների ու հալածանքների:

Նշված բոլոր դեպքերի համար Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը կանխատեսել ու ամրագրել է սպառնալիքները հաղթահարելու իրավական - քաղաքական հստակ միջոցներ ու մեխանիզմներ: Դրանք ձեւարկերպված են Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 2011 թվականի Մարտի 29-ին ընդունած «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին» հատուկ որոշման մեջ, համաձայն՝ «Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնվենցիայի, ընդունված՝ Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ.:

Հաշվի առնելով տվյալ երկրի, այս դեպքում՝ Սիրիայի (Իրանի կամ Միջին Արեւելքի մեկ այլ պետության) ներքին քաղաքական հնարավոր ճգնաժամը, ըստ որոշման 3-րդ հոդվածի՝ առաջարկվել է հետեւյալ լուծումը.

3. «Արեւմտեան Հայաստանի Հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը, ժամանակակից աշխարհի մէջ տեղի ունեցող նախայարձակ պատերազմներու, յեղաշրջումներու, ազգամիջեան եւ միջկրօնական ընդհարումներու, նաեւ այսպէս կոչուած քաղաքակրթութիւններու բախման, եւ անոնցմէ բխող բռնութիւններուն, կոտորածներուն եւ ցեղասպանութիւններուն, առաւել, հրահրուած կամ ուղղորդուած քառսային վիճակներուն չմասնակցելու

իրաւունք ունի, համաձայն՝ «Չեզոք պետութիւններու եւ անձանց իրավունքներու եւ պարտավորութիւններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հասկա, 18 հոկտեմբեր 1907 թ. Պայմանադրութեան (Convention V)»:

Հաշվի առնելով տվյալ երկրի, այս դեպքում՝ Միրիայի (Իրանի կամ Միջին Արեւելքի մեկ այլ պետության) նկատմամբ հնարավորագրեւիան, ըստ 4-րդ հոդվածի՝ առաջարկվել է.

4. «Արեւմտեան Հայաստանի Հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը, յաջորդական բռնութիւններէ, յարձակումներէ, բռնագաղթերէ ու կոտորածներէ պաշտպանուելու, ինչպէս նաեւ իր բնակութեան երկիրը արտաքին յարձակումներէ պաշտպանելու իրաւունք ունի, համաձայն՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի, որ կը շեշտէ՝ «Անհատական եւ հաւաքական ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

Հաշվի առնելով տվյալ երկրի, այս դեպքում՝ Միրիայի հայության (Իրանի կամ Միջին Արեւելքի մեկ այլ պետության մեջ ապրող հայության) կյանքի, ինչքի եւ անվտանգության իրավունքների նկատմամբ հնարավոր սադրանքներն ու սոսնձգությունները, ըստ 5-րդ հոդվածի՝ առաջարկվել է.

5. «Արեւմտեան Հայաստանի Հայերը, բոլոր այն դէպքերուն, երբ հարկադրուած են պաշտպանելու իրենց Մշտական, Զինուած, Դրական Չեզոքութիւնը կը կազմակերպեն հասարակական կարգի եւ համայնքի անվտանգութեան, պաշտպանութեան եւ տարածքային ապահովութեան զինուած ոյժեր, համաձայն՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի, որ կը շեշտէ՝ «Անհատական եւ հաւաքական ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

«Չեզոք պետութիւնների եւ անձանց իրավունքների եւ պարտավորութիւնների մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնվենցիայի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 2011 թվականի Մարտի 29-ին ընդունած «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին» որոշման հոդվածներից իրավունք ունի օգտվելու Միրիայի հայությունը, իսկ դա նշանակում է, որ Միրիայի հայությունը իրավունք ունի ինքնապաշտպանության, ապագա ունենալու եւ զարգանալու:

Այստեղ ազգային հիշողությունը թարմացնելու եւ ազգային պետական իրավունքներն ամրագրելու նպատակով հիշենենք նաեւ, որ Հայությունը այլեւս այլ տեղ չունի նահանջելու, բացի իր բնօրրան հայրենիքից Արեւմտյան Հայաստանից (ներառյալ Կիլիկիան):

Արեւմտյան Հայաստանի Կառավարության  
Արտաքին Գործերի Հանձնաժողով  
25.08.2012

**Վանի նահանգապետարանն սկսել է Վանի Կտուց կղզու հայկական եկեղեցու վերակառուցման աշխատանքները**



Tert.am. 9-8-2012- Աղթամար եկեղեցու

վերակառուցումից հետո թուրքական կառավարությունն այժմ էլ սկսել է Վանի Կտուց (Չարփանաք) կղզու եկեղեցու վերանորոգման ուղղությամբ աշխատանքներ իրականացնել: Ինչպէս տեղեկացնում է «Ձիհան» գործակալությունը, վերակառուցումն արվում է Վանում տեղի ունեցած երկու ավերիչ երկրաշարժերից հետո սուրիզվր զարգացնելու նպատակով: Մինչև 1915 թ-ը գործած Կտուցի եկեղեցու վերականգնմանն ուղղված նախնական աշխատանքներն արդեն սկսվել են: Ընթանում են նաև Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում երրորդ պատարագը մատուցելուն ուղղված աշխատանքները: Թուրք ճարտարապետները նշում են, որ 1720 թ.-ին տեղի ունեցած երկրաշարժից եկեղեցին էական վնաս է կրել, սակայն կանգուն է եղել մինչև 1915 թ-ը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2011 թ-ի երկրաշարժից այն լուրջ վնաս չի կրել: «Յուզընջը յըլ» համալսարանի ճարտարապետաշինարարական համալսարանի դոցենտ Սահաբթեթին Օզթյուրքը նշել է, որ վերակառուցման նախագիծն արդեն կա և շուտով աշխատանքները սկսվելու են: «Նախ եկեղեցու հյուսիսում և արևմուտքում պեղումներ պետք է կատարել: Մակայն փորելուն զուգահեռ վերակառուցման աշխատանքներն էլ պետք է բույն առաջ սկսել, որպեսզի այն շուտով նախկին գործառույթներին վերադարձվի: Վանի նահանգապետարանն ու Մշակույթի և զբոսաշրջության վարչությունը արդեն այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկում են»,-ասել է նա:

**Մահմեդականների մեծ շեյխը ֆեթվա է արձակել՝ դատապարտելով թուրքերի կողմից հայերի ջարդերը**

15 Օգոստոսի 2012 - 11:49

Վերջերս անսպասելիորեն աչքովս ընկավ մի չափազանց կարևոր իսլամական փաստաթուղթ, որը խստորեն դատապարտում է թուրքերին՝ կրոնի բողի տակ հայ քրիստոնյաներին սպանելու համար:

Այս բացառիկ փաստաթուղթը ֆեթվա կամ կրոնական հրամանագիր է, որն արձակվել է 1909 թվականի մայիսին Եգիպտոսի Մեծն շեյխ Սալիմ ալ-Բիշրիի կողմից, և դատապարտում է թուրք մահմեդականներին Օսմանյան կայսրության խոշոր

քաղաքներից մեկում՝ Ադանայում 30 հազար հայերին կոտորելու համար:

Ալ-Ազհար մզկիթի շեյխ ալ-Բիշրին, Կահիրեում մահմեդական աշխարհի իսլամական հետազոտությունների նշանավոր կենտրոնի առաջնորդն այս ֆեթվան արձակել է ի հակազդեցություն 1909 թվականի ապրիլին թուրք մուֆթիի (կրոնական առաջնորդ) արձակած հրամանագրի, որով նա թուրքերին կոչ է արել սպանել հայերին, քանի որ «նրանք դեմ էին մահմեդականներին և Աստծուն»:



Համացանցում պատահաբար տեսնելով եգիպտական ֆեթվայի հիշատակումը, կապ հաստատեցի հայոց պատմության մասնագետ, պրոֆ. Մոհամմադ Ռիֆաաթ ալ-Իմամի հետ, որին հանդիպել էի վերջերս Կահիրե կատարած իմ այցելության ժամանակ: Դոկտ. ալ-Իմամը սիրով ինձ ուղարկեց այս կարևոր կրոնական փաստաթղթի արաբական տեքստի բնագիրը, որից առաջին անգամ հայերեն թարգմանությամբ հատվածներ ենք ներկայացնում ստորև.

«Տեղական թերթերում տեսել ենք զարհուրելի լուրեր և նողկալի զեկույցներ Օսմանյան կայսրության մի շարք գավառների մահմեդականների մասին, որոնք հարձակվել են քրիստոնյաների վրա և զազանաբար սպանել նրանց: Մենք չէինք կարող հավատալ այդ զեկույցներին և հույս էինք տածում, որ դրանք կեղծ էին, քանի որ իսլամն արգելում է ագրեսիան, բռնությունները, արյունահեղությունը, և մարդկանց վնասելը անկախ այն բանից, թե նրանք մահմեդական են, քրիստոնյա թե հրեա:

Օհ, մահմեդականներ՝ տարածաշրջանում և այլուր ապրող, զգուշացեք գործողություններից, որոնք արգելված են Ալլահի կողմից իր շարիաթում [իսլամական օրենք], և խնայեք այն արյունը, որ Ալլահն արգելում է թափել, և մի մեղանչեք որևէ մեկի դեմ, քանի որ Ալլահը չի սիրում ագրեսորներին....

Ձեր պարտքն է նրանց հանդեպ, ովքեր կապվել են ձեզ հետ, ովքեր իրենց անվտանգությունը վստահել են ձեզ և ովքեր բնակվում են ձեզ հետ և ձեր կողքին են Ահլսլ Դհիմմա-ից (հրեա և քրիստոնյա փոքրամասնություններ, որոնց իսլամ կրոնը պաշտպանում է), ինչպես պարտադրված է Ալլահի կողմից՝ բարձրացնել նրանց, ինչպես կբարձրացնեք ինքներդ ձեզ, պաշտպանել նրանց այն ամենից, ինչից կպաշտպանեք ինքներդ ձեզ և ձեր ազգակիցներին, ձեր ուժը դարձրեք նրանց ուժը, հպարտացեք և բարգավաճեք ձեր ուժով, և պաշտպանեք

նրանց վանքերն ու եկեղեցիները, ինչպես կպաշտպանեք ձեր մզկիթներն ու տաճարները:

Ով որ վիրավորի նրանց կանանց, սուր քաշի նրանց վրա և ճնշի նրանց, նա ժխտում է Ալլահին տված մահմեդականների խոստումը, որը մահմեդականների պարտավորությունն է:

Իմացած եղեք, որ եթե այն, ինչ հասարակությունը լսում է՝ ճշմարիտ է, ապա դուք զայրացրել եք ձեր Ալլահին և այն չի գոհացրել ձեր մարգարեին ու Շարիաթը: Դուք ձեր մահմեդական եղբայրներին հեռացրել եք իրենց կրոնից, որի մերժումը դարձել է սոսկալի՝ այս նողկալի արարքի պատճառով, խախտելով այն, ինչն արգելված է, և դուք արձակում եք ձեր կրոնից անտեղյակ մարդկանց լեզուները՝ սոսկալի բռտեր ասելու ընդդեմ բոլոր մահմեդականներին:

Ուրեմն, լսեք, թե ինչ է ասել ձեր մարգարեն նման իրավիճակների մասին, որում դուք այժմ հայտնվել եք: Նա ասել է. «Նա ով սպանում է դաշնակից անձի [անձ, որն ըստ համաձայնագրի միացել է իսլամին՝ օգնության և աջակցության նպատակով] չի զգա Դրախտի բուրմունքը և եթե անգամ զգա այն, ապա դա կլինի 40 տարվա հետվից»: Նա նաև ասել է. «Անձը, որը գցում է «dhimmi»-ին [հրեական կամ քրիստոնեական փոքրամասնության անձ] կմտրակվի կրակի ճիրաններում Ահեղ դատաստանի օրը»:

Այս փաստաթղթից ամբողջովին պարզ է դառնում, որ 1909 թվականի հայկական կոտորածները և դրան հաջորդած 1915 թվականի Ցեղասպանությունը մահմեդական թուրքերի և հայ քրիստոնյաների միջև եղած կրոնական բախման արդյունք չէին: Ալ-Ազհարի Մեժն շեյխն արդարացիորեն դատապարտել է թուրքերին՝ հայերի զանգվածային կոտորածի համար, որը կատարվել է ռասիստ պանթուրքական, և ոչ թե պանիսլամական նկատառումներով՝ հայկական հողերն ու կալվածքները գրավելու մտադրության հետ միատեղ: Թուրք մուֆթիների (հոգևորական) կողմից արձակված տարբեր ֆեթվաները նպատակ ունեին հրահրել մուլեռանդ թուրք խուժանին՝ հարձակվել և սպանել անմեղ հայերին:

Շեյխ ալ-Բիշրիի 1909 թվականի ֆեթվան հետագայում ամրապնդվել է 1917 թվականին Մեքքայի Շարիֆ ալ-Հուսեյն իբն Ալիի արձակած հրովարտակով՝ հրամայելով բոլոր մահմեդականներին պաշտպանել հայերին և «ապահովել այն ամենով, ինչի կարիքը նրանք կարող են ունենալ ... որովհետև նրանք մահմեդականների Պաշտպանված ազգն են, որոնց մասին մարգարե Մուհամմեդն ասել է. «Ով որ անգամ պարան գողանա նրանցից, ես կլինեմ նրա հակառակորդը Ահեղ դատաստանի օրը»:

2009 թվականին, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանը հայտարարում էր, թե «Մահմեդականները ցեղասպանություն չեն կատարել», նա միայն մասամբ էր ճիշտ: Նա պետք է ասեր. «Լավ մահմեդականները ցեղասպանություն չեն կատարել»: Երիտթուրքերի կուսակցության ղեկավարները, ովքեր

1915 թվականին իրագործել էին Հայոց ցեղասպանությունը, դատելով իսլամի սուրբ գրքի՝ Դուրանի ուսմունքներից, հավատացյալ մահմեդականներ չէին: Նրանք պարզապես ոճրագործներ էին, որոնք իսլամը իբրև հարմար պատրվակ էին օգտագործել զանգվածային ջարդեր իրականացնելու համար: Ալ-Ազհարի Մեծն շեյխի կարեկցող ֆեթվան դեռ այսօր էլ ճշմարիտ է հնչում, մանավանդ այս օրերին, երբ մահմեդական աշխարհը նշում է Ռամազանի ավարտը:

\*\*\*

Թարգմանիչ՝ Ռուզաննա Ավագյան  
Հարութ Սասունյան  
«Կալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր  
HayNews.am

**Անիի եկեղեցիները վերակառուցվում են**



14 Օգոստոսի 2012

Հայ-թուրքական սահմանին գտնվող պատմական Անի քաղաքի ավերված եկեղեցիները սկսել են վերանորոգել, տեղեկացնում է «Ակոս»-ը:

Վերանորոգման աշխատանքներն սկսվել են Անիի Ամենափրկիչ և Սուրբ Գրիգոր եկեղեցիներում: Աշխատանքներն իրականացվում են Համաշխարհային հուշարձանների հիմնադրամի, Կարսի Մշակույթի և տուրիզմի վարչության և Ամերիկայի դեսպանատան ֆինանսավորմամբ:

Աշխատանքները տևելու են մինչև սեպտեմբերի 15-ը: Այս ընթացքում վերանորոգվել են նաև Անիի տարբեր եկեղեցիների ճեմուղիներն ու ճանապարհները:

«Փամուքքալե» համալսարանի դոցենտ Ֆահրիյե Բայրամը տեղեկացրել է, որ արդեն իրականացվել է Սուրբ Գրիգոր եկեղեցու շրջակայքի բարեկարգման և մաքրման աշխատանքները:

Բայրամը նշել է, որ Սուրբ Գրիգոր եկեղեցին կառուցվել է 980 թ-ին: Նա նշել է, որ Անին շատ հին պատմություն ունի և առևտրի ու կրոնական կենտրոն է եղել: «Այստեղ պետք է պեղումներ և վերակառուցման աշխատանքներ կատարվեն: Դրանք շարունակվելու են նաև առաջիկա տարիներին», -ասել է նա:

1036 թ-ին Սմբատ թագավորի կողմից կառուցված եկեղեցին վերանորոգվել է 1291 և 1342 թվականներին:

1930-ական թվականներին կայծակի հարվածից այն երկու կես էր եղել:

Այժմ վերակառուցման աշխատանքների շրջանակներում քանդված կտորները հավաքվում և համարակալվում են: Այս եկեղեցու վերանորոգման աշխատանքներում 20 մասնագետ է ներգրավված:

Աղբյուր՝ Tert.am

**Դիարբեքիի հայկական եկեղեցին վերածվել է մոր և մանկան կրթության կենտրոնի**

Թուրքիայի Դիարբեքի նահանգի Սուրի շրջանի Հասըրըլ թաղամասում պահպանվել է հայկական պատմական մի եկեղեցի, որը կառուցվել է 350 տարի առաջ: Հայ կաթոլիկներին պատկանած այս եկեղեցին 1850-ականների մի ժամանակահատված գործել է որպես մզկիթ: Անբարեկարգ վճակում գտնվող եկեղեցին 4 տարի առաջ վերանորոգվել է Թուրքիայի հիմնադրամների գլխավոր վարչության տրամադրած միջոցներով:

Այժմ եկեղեցու երիցատունը վարձակալության հիմունքներով վերածվել է «Մոր և մանկան կրթության կենտրոն»-ի: Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը «Վերադարձիր գյուղ» նախագծի շրջանակներում տրամադրել է 130 մլն լիրայի ֆինանսական աջակցություն: Այդ գումարով եկեղեցու ներսում կահավորվել է ժամանակակից չափանիշներին համապատասխան երկու դասասենյակ, մեկ խաղասենյակ և խոհանոց, ինչպես նաև մայրերի համար նախատեսված մեկ ընդարձակ սրահ, որտեղ ևս հնարավոր կլինի գրել-կարդալ սովորել:

Ըստ թուրքական «Աքշամ» (Akşam) օրաթերթի՝ 80 աշակերտի համար նախատեսված այդ կենտրոն հաճախում են այն ընտանիքների երեխաները, որոնք սոցիալապես անապահով են և չեն կարող երեխաներին ուղարկել մանկապարտեզ: Երեխաների սննդի և հագուստի բոլոր ծախսերը կատարվում են պետական միջոցներով:

Սուրի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար Մուստաֆա Քըլըչը տեղեկացրել է, որ առաջիկայում նախատեսված է եկեղեցու մի մասն էլ վերածել արհեստագործական կենտրոնի (գորգագործություն, պղնձագործության), որտեղ կկարողանան մասնագիտություն ձեռք բերել:

**Van Times-ը կրկին հայերեն է հրատարակվելու**

Հուլիս 18, 2012

Վանում հրատարակվող Van Times թերթը, որը դադարեցվել էր տպագրվել, երբ մահացավ նրա սեփականատեր Ազիզ Այքաչը, կրկին պատրաստվում է հրատարակվել ամսագրի տեսքով եւ 4 լեզվով, այդ թվում՝ հայերենով:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Van Times-ի նախկին սեփականատեր Ազիզ Այքաչի որդին նախաձեռնել է Van Times-ը կրկին հրատարակել:



Հրատարակման գործում աջակցություն են ցուցաբերում Նազիկ Արմենակյանը, Բագրատ Էստուկյանը, Մեհմեդ Ֆըրաթը, Արիս Նալչին եւ այլք: Ամսագրի նախագծի համակարգող Արիս Նալչըն նշել է, թե աշխարհի պատմության մեջ Վանը կարելուք տեղ ունի, որի համար էլ որոշվել է Van Times ամսագիրը հրատարակել: Նալչըն շեշտել է, որ ամսագրի առաջին համարը լույս կտեսնի հանգանակությունների շնորհիվ:



Նշենք, որ Van Times-ը 2010-ի սեպտեմբերին, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում պատարագ անկացնելուց օրեր առաջ սկսել էր տպագրվել նաև հայերեն:

**1915-ին հայազգի Սարգիսը թուրքերի համար հերոսաբար կոչվում էր, իսկ այդ ժամանակ Կեսարիայում թուրքերը կոտորում էին նրա հորն ու մորը. Sabah**



Օգոստոս 10, 2012

Թուրքական Sabah-ի սյունակագիր Էնգին Արդըչն անդրադարձել է 1915-ին Չանաքքալեի ճակատամարտին եւ հերոսաբար մարտնչած հայազգի Սարգիս Թորոսյանի հետ տեղի ունեցած իրադարձություններին:

«Միլիոնավոր մարդիկ կարող ենք ցույց տալ, ովքեր Չանաքքալեն համարում են թուրքի հաղթանակ, չնայած որ մեր մեջ գերմանացի սպաներ կային: Այդ ժամանակ մեր ՋՈՒ գլխավոր շտաբի պետը գերմանացի էր, բայց

հաղթանակը թուրքական է...: Բանակի հրամանատարը գերմանացի էր, սակայն հաղթանակը՝ թուրքական:

Իսկ զիտեք, որ Չանաքքալեի ճակատամարտում կռվել են արաբներ, եզդիներ: Ջեմալ փաշան նրանց Սիրիայից էր ուղարկել:

Չանաքքալեում կար հույն սպա, կար նաև հայ սպա՝ Սարգիս Թորոսյանը, ով հրետանու հրամանատար էր, մի քանի անգլիական նավ էր խորտակել: Նա նույնիսկ Էնվեր փաշայից պատվոգիր էր ստացել: Կրտսեր լեյտենանտ էր, հասավ մինչև կապիտան: Պարզեատարվեց օսմանյան բանակի շքանշանով: Նա Կայսերիից (Կեսարիա) էր: Այն օրերին, երբ նա Չանաքքալեյում հերոսաբար մարտնչում էր Թուրքիայի համար, Կայսերիում կոտորում էին նրա ծնողներին: Այո, նույն օրերին՝ 1915-ի ամռան սկզբին...:

1917-ին վերադառնում է Կայսերի...: Ընտանիքից ողջ մնացած գոնե մեկ անդամ գտնելու հույսով մեկնում է Սիրիա (Դեր Ջոր-խմբ): Այնտեղ քրոջ՝ Պայծառին այնպիսի վիճակում է գտնում, որ ըմբոստանում է Օսմանյան Թուրքիայի դեմ, միանում արաբական ապստամբական զորքերին: «Չանաքքալեի պատերազմում Թորոսյանը հերոս դարձավ? Ահա, քեզ հայրենիք դավաճան», -ասում էին նրա հորն ու մորը սպանողները:

Այնուհետ հալածված շատ հայերի պես նա էլ ԱՄՆ մեկնեց: 1947-ին գրեց իր հուշերը՝ «Չանաքքալեից մինչև Պաղեստինի ճակատ», որն արդեն մեր լեզվով է թարգմանվել: Գիրքը Թուրքիայում հրատարակած պրոֆ. Այհան Աքթարը այդ առթիվ լավ նախաբան է գրել, բայց իհարկե, չէք կարդալու», -գրել է Sabah-ի սյունակագիրը:

**Դիարբեքիի քաղաքապետը վարդերով է դիմավորել հայաստանցի գործարար կանանց**



Հուլիս 12, 2012

Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը իր աշխատասենյակում ընդունել է հայաստանցի կին գործարարներին, ովքեր թուրք գործընկերների հետ համագործակցության նպատակով ժամանել են Դիարբեքի: (Ֆոտոռեպորտաժ)

Ինչպես Դիարբեքիից տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը, Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը վարդերով է դիմավորել հայ կին գործարարներին եւ ջերմ մթնոլորտում հանդիպում անցկացրել: Հանդիպմանը ներկա է եղել նաև Դիարբեքիի փոխքաղաքապետ Հաֆիզե Իփեքը:

Հայկական պատվիրակության ղեկավար, «Կանանց ֆորում» կազմակերպության նախագահ Լիլիթ Ավետիսյանը եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը» ծրագրի համակարգող Արմեն Մելքոնյանը ներկայացրեցին նախագծի մասին՝ շեշտելով, որ այն իրականացվում է, քանի որ երկու երկրների միջև չկան դիվանագիտական հարաբերություններ: Լիլիթ Ավետիսյանի խոսքով՝ հայ եւ թուրք գործարար կանանց միջև համագործակցությունը կնպաստի երկու հասարակությունների միջև հարաբերությունների բարելավմանը:

Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը նշեց, որ ողջունում է նման նախագծերը՝ շեշտելով, որ 100 տարի է՝ Մերձավոր Արեւելքում տղամարդ քաղաքական գործիչները չեն կարողանում խաղաղության հասնելու բանաձեւը գտնել, ինչն ամենայն հավանականությամբ կանեն կանայք: «Տնտեսական եւ սոցիալական զարգացումները մեզ խաղաղության կտանեն: Ձեր այստեղ գտնվելու կարևոր արդյունքներն էրից մեկն այն է, որ դրանով աջակցում եք խաղաղության հաստատմանը: Մշակույթային եւ առևտրական հարաբերությունները մի որոշ ժամանակ հետո կհեշտացնեն խաղաղության հասնելու գործընթացը: Այդ իսկ պատճառով ձեր այս այցը կարևոր եմ համարում»,- ասաց Օսման Բայդեմիրը:

Անդրադառնալով 1915-ին, Օսման Բայդեմիրը նշեց, որ Դիարբեքիը բազմամշակույթ, բազմալեզու եւ բազմաթիվ հավատքներ ունեցող քաղաք էր, որը մեծ հարված ստացավ: Նրա խոսքով՝ ներկայիս սերունդն իր հոգու խորքում դատապարտում է 100 տարի առաջ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները: «Այսօրվա սերունդը եղբայրական ձեռք է ցանկանում մեկնել եւ հավատում է, որ շատ շուտով սահմանները անիմաստ են լինելու: Նոր սերունդը հավատում է, որ ապրելու են միասին եւ եղբայրաբար: Իսկ նման հանդիպումները մեր այդ ուզած կյանքի հիմքերն են կազմում»,-նշեց Բայդեմիրը:

Հանդիպման ավարտին Լիլիթ Ավետիսյանը հայկական պատվիրակության անունից Դիարբեքիի քաղաքապետին հանձնեց 20 տարեկան հայկական կոնյակ, իսկ Օսման Բայդեմիրը հայկական կողմին նվիրեց նախորդ տարի վերանորոգված Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու պատկերով մի շրջանակ:

**Դիարբեքիում մշակութային փողոց է ստեղծվում, որը կներառի նաև հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին**



Օգոստոս 07, 2012

Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Դիարբեքի քաղաքում ստեղծում է մշակութային փողոց, որտեղ տեղ կգտնեն հայկական, առաքական եկեղեցիներ, հրեական սինագոգ, մզկիթ եւ պեղինների հոգեւոր տուն ջեմելի:

Դիարբեքիի տեղական Güneydoğu GÜNCEL պարբերականի թղթակցի հետ զրույցում Դիարբեքիի Սուրի շրջանի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը հայտնել է, որ Դիարբեքիի քաղաքապետարանի հետ համատեղ արագորեն աշխատանքներ են ընթանում՝ Սուրիչի թաղամասում «Մշակույթային փողոց» կառուցելու համար:

«Նոր ստեղծվելիք փողոցը սկիզբ կառնի Սուրիչի թաղամասում գտնվող «Չորս ոտքեր ունեցող մինարեթ» մզկիթի մոտից եւ իր մեջ կներառի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին, նոր կառուցվելիք սինագոգ, ջեմելի եւ եզդիների հոգեւոր տուն»,-նշել է Աբդուլլահ Դեմիրբաշը՝ շեշտելով, որ ամեն ջանք պետք է գործադրել՝ անցյալում տեղի ունեցած դառնությունները չկրկնելու համար:

Դեմիրբաշի խոսքով՝ բազմալեզու եւ բազմակրոն հասարակության միտքը սա է, որի համար Սուրի քաղաքապետարանը սկսել է վերանորոգել մզկիթ, հայկական եկեղեցի, սինագոգ, ջեմելի եւ մյուս կրոնական ուղղությունների հոգեւոր կենտրոններ: «Բիարկե, այս կառույցները վերանորոգելու ժամանակ սխալներ թույլ չտալու համար խորհրդակցում են այդ կրոնների ներկայացուցիչների հետ: Մեր նպատակն է, որ ամեն ինչ ճիշտ անենք», ասել է Սուրի քաղաքապետը:

Աբդուլլահ Դեմիրբաշը, անդրադառնալով պատմական ողբերգություններին, նշել է, որ «Իթթիհադ վե թերաքքի»-ն (Երիտթուրքեր-խմբ) մեծ ցավեր է պատճառել հարեւանությամբ ապրողներին իրար թշնամացրել եւ փորձել մեկին մյուսի դեմ հանել:

Նշենք, որ Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը թուրքերենով եւ հայերենով հրատարակել է հայկական մի շարք հեքիաթներ, այդ թվում Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»: Դեմիրբաշի նախաձեռնությամբ նաև Դիարբեքիը ներկայացնող տուրիստական ուղեցույցը

տպագրվել է նաև հայերենով: Սուրի շրջան մտնող ճանապարհների մոտ դրված ցուցանակների վրա կա նաև հայերենով գրված «Բարի եկաք» գրությունը:

**Թուրքերը, չկարողանալով վերանորոգել հայկական եկեղեցին, այն հանձնել են հայկական հիմնադրամին**



Օգոստոս 16, 2012

Թուրքիայի հարավային Մարդին նահանգի Քըզըլթեփեյի շրջանում գտնվող պատմական Սուրբ Գեուրգ հայկական եկեղեցին ավերակ վիճակում հանձնվել է Մարդինի հայկական կաթոլիկ եկեղեցու հիմնադրամին:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Radikal-ը, հայկական պատմական եկեղեցին, որի կառուցման տարեթիվը հայտնի չէ, երկար ժամանակ որպես գյուղատնտեսական թունաքիմիկատների պահեստ է օգտագործվել, մինչև որ այն հայտնաբերվել է թուրք հայտնի իրավապաշտպան Ռազըփ Զարաքուրի կողմից:


Պետության կողմից 2004 թվականին Սուրբ Գեուրգ եկեղեցին վերցվել էր հսկողության տակ եւ որոշում կայացվել վերանորոգել այն: Սակայն նշանակված պահակը «հայերի գանձերը» գտնելու նպատակով մոտ 7 մետր փոս է փորել եկեղեցու ներսում, որի հետեւանքով դեռևս կանգուն մնացած տանիքը փլվել է: Այս դեպքից հետո եկեղեցու պահակին ձերբակալել են:

Եկեղեցու տանիքը փլուզվելուց հետո վերանորոգման աշխատանքները դադարեցվել են եւ երկար ժամանակ չանցած իշխանությունները եկեղեցին հանձնել են Մարդինի կաթոլիկ հայկական եկեղեցու հիմնադրամին՝ շեշտելով. «Կարող եք վերանորոգել»:

**Թուրքիայի փոխվարչապետը հայտնել է վերանորոգված եկեղեցիների քանակը**

Հուլիս 24, 2012

Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդադը պատասխանել է «Ազգայնական շարժում» կուսակցության կուսակցության պատգամավոր Մեհմեդ Շանդըրի գրավոր հարցմանը՝ Թուրքիայում վերանորոգված եկեղեցիների քանակի եւ դրանց վրա պետության ծախսած գումարի վերաբերյալ:



Թուրքական Star-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդադը հայտնել է, որ 2002-ից այս կողմ Թուրքիայում կրոնական արարողությունների անցկացման համար բացվել է 10 եկեղեցի, իսկ նույն ժամանակահատվածում վերանորոգվել է 68 եկեղեցի:

Բեքիր Բոզդադի խոսքով՝ 2002-ից այս կողմ եկեղեցիների վերանորոգումների եւ խնամքի համար հատկացվել է մոտ 18 մլն թուրքական լիրա (10 մլն դոլար):

Նշենք, որ Վանի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգման համար Թուրքիայի բյուջեից հատկացվել էր մոտ 1,5 մլն դոլար:

**Թուրքիայում հայերի եւ ասորիների կոտորածների մասին ֆիլմ է նկարահանվել**

Հուլիս 27, 2012

Թուրքիայի Բաթմանի համալսարանի գեղեցիկ արվեստների ֆակուլտետի դեկան, պրոֆ. Մեդաթ Ջերեջին 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած հայերի եւ ասորիների կոտորածների մասին ֆիլմ է նկարահանել:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Մեդաթ Ջերեջի նկարահանած ֆիլմը Թուրքիայում ադմուլ է բարձրացնելու, քանի որ նման թեմաների մասին է նկարահանել:

Ֆիլմում պատմվում է 1915-ին հայերին իրենց բնակավայրերից բռնի տեղահանության եւ դեպի Դեր Ջորի անապատներ ուղարկելու, ինչպես նաև այդ ժամանակաշրջանում տեղափոխման ծանր պայմանների եւ հրոսակների հարձակումների հետեւանքով մեծ թվով հայերի սպանությունների մասին:

Ֆիլմում պատմվում է, որ Դիարբեքիրի այն ժամանակվա նահանգապետ Ռեշիթ Բեյը տեղական կառավարիչներին հրահանգ էր տվել բոլոր քրիստոնյաներին տեղահանության ենթարկել:

«Այնքեհֆից մինչև Այնվերթ» (բնակավայրերի անուններ-խմբ) վավերագրական ֆիլմում մեծամասամբ ներկայացվում է ասորիների դեմ իրագործված կոտորածները, մինչև 1915-ը Մարդինում, Նուսայբինում, Միդյաթում եւ Բեշիրում ապրած ասորիների քանակն ու այլ ժողովրդագրական տվյալներ:

**ԽԱՐԲԵՐԴ. ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔՆ ՈՒ  
ԳՅԱՎՈՒՐԻ ԳԵՐԵՁՄԱՆԸ**

*ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խարբերդ,  
Արեւմտյան Հայաստան*



Արեւմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքից մինչեւ պատմական Խարբերդ քաղաք հասնելու համար անհրաժեշտ է կտրել-անցնել ավելի քան երկու ժամվա ճանապարհ: Ճանապարհն անցնում է Էլազիգ քաղաքով, եւ երբ Խարբերդի բարձունքից ներքեւ եւ նայում, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Շուշիի բարձունքից Ստեփանակերտին եւ նայում: Գրեթէ միանման բնությունն ու աշխարհագրական նույն տեղանքը ապշեցնում են, հիացնում: Սակայն, ի տարբերություն Շուշիի, Խարբերդում հայկական շունչ չկա: Այստեղ դեռեւս թեւածում են հայ անմեղ նահատակների ոգիներն ու իրենց հոգու հանգստության համար պահանջում արդարություն, պատիժ ու հատուցում...

Ժամանակին Խարբերդում գործում էին մի քանի վարժարաններ եւ մեկ քոլեջ: Քաղաքն ուներ երեք եկեղեցի եւ մի քանի մատուռ: Մեկ դար առաջ Խարբերդն արհեստագործության եւ առեւտրական կենտրոն էր: Քաղաքի հայ բնակչությունը զբաղվում էր արհեստներով, առեւտրով, երկրագործությամբ ու այգեգործությամբ: Այստեղ զարգացած էին շինարարական գործը, ջուլհակությունը, ներկարարությունը, կոշկակարությունն ու պղնձագործությունը: Առանձնահատուկ նշանակություն ունեին մետաքսագործությունը եւ գորգագործությունը:

1881 թ. Գրիգոր եւ Սարգիս Քյուրքճյան եղբայրներն այստեղ հիմնադրել են մետաքսի գործարան, որը 1896 թ. թուրքական իշխանությունները քարուքանդ են արել:

Ավելի զարգացած էր գորգագործությունը. գորգագործական ձեռնարկությունների թիվը հասնում էր ութի: Արտադրված հայկական գորգերը վաճառվում էին զանազան երկրներում: Դրանք արտահանվում էին հատկապես ԱՄՆ եւ եվրոպական երկրներ: 1908թ. Նյու Յորքում բացվում է Խարբերդի գորգերի հատուկ խանութ, որը մեծ համբավ էր վայելում:

Այսօր Խարբերդն ամալի մի վայր է՝ դաշտավայր՝ նման ուրվականների մեռյալ քաղաքի:

Այստեղ ընդամենը մի քանի տասնյակ քրդական տուն կա:

Գրեթէ մեկ դար առաջ թուրքերն այնպես են այրել քաղաքն ու ավերել ամեն ինչ, որ անհնար էինք

համարում այդ վառված քաղաքում հայկականի ու հայի մասին որեւէ, թեկուզ չնչին հետք գտնելը: Պարզվեց շտապում էինք:

Խարբերդի «հուշարձան կոթողներից» մեկը, թերեւս ամենահայտնին, հայկական հետք ու թուրքական ցայտուն աստվածություն ունի: «Գյավուր թաշեի», հայերեն թարգմանությամբ՝ գյավուրի, անհավատի քարը կամ գերեզմանը, որը գտնվում է Խարբերդի ժայռերից մեկի գլխին:

Տեղացիների հետ զրույցներից պարզվեց, որ սա այն վայրերից է, որ ամեն մի խարբերդցի գիտի, սակայն մինչ ուղղություն ցույց տալը նախ հետաքրքրվում են. «Ըսկ ինչի՞ համար եք հարցնում»: Տեղացիներին թվում է, թե այցելուները եկել են գերեզմանը քանդելու եւ հայի պահած ոսկիները գողանալու:

«Գանձեր գտնելու հույսեր չփայփայեք, այնտեղ քարերի կույտից բացի ոչինչ չէք գտնի», ասում են նրանք ու շտապում ցույց տալ ճանապարհը:

Թե ինչ նախապատմություն ունի Գյավուր թաշը, գիտեն գրեթէ բոլորը:

Ալիին հանդիպեցինք պատահաբար: Ութսունամյա ծերունուն զարմացրել էր զբոսաշրջիկների այցելությունն «իրենց քաղաք»: Նախ, նա հրավիրեց սուրճ խմելու, բայց երբ իմացավ, որ հայեր ենք, «ափսոսանքով» ձեռքերը թափահարեց ու ասաց. «Կներեք, տանը շաքարավազ չկա: Կինս ասում է, որ չենք կարող հյուրեր ընդունել»:

Նրա պատմելով՝ մեկ դար առաջ թուրքի եւ հայի միջեւ կռիվ է սկսվել: Հայն ու թուրքը մենամարտել եւ երկուսն էլ սպանվել են: Հային թաղել են սարի գլխին ու տեղանքն անվանել Գյավուր թաշ կամ Գյավուրի քար: Սարի գլխին գտնվող գերեզմանը քարերի մի կույտ է: Զգացվում է, որ տարիներ շարունակ գերեզմանը տեսել է տասնյակ ձեռքեր, բահեր, որոնք փնտրել են գանձեր:

Հայկական երկրորդ հետքը գտանք այսպես կոչված քաղաքի կենտրոնում: Հայկական եկեղեցի հիշեցնող կառույցի մի պատն ու հարեւանությամբ գտնվող փոքրիկ մատուռը կիսավեր վիճակում էին: Այդ եկեղեցիների վերաբերյալ որեւէ տեղեկություն գտնել չկարողացանք: Խարբերդցիներն այն անվանում են գովի մի պատ, իսկ քանի որ ձորում է, ամբողջությամբ մատնվել է մոռացության:

Խարբերդում կոտորածները սկսվել են 1800-ականներին: Այդ ժամանակահատվածում 1000 հայ է գաղթել ԱՄՆ, 1895թ. կոտորածի ժամանակ 53 հայաբնակ գյուղերի հայությունը մասամբ կոտորվել է, մասամբ հավատափոխ արվել, կողոպտվել է 6023 ընտանիք, այրվել է 1861 տուն: Ըստ թուրքական աղբյուրների՝ 1915թ. այստեղից տարագրվել է 50024 հայ: Նրանց մի մասը բնակություն է հաստատել Արեւելյան Հայաստանում:

Մայրաքաղաք Երեւանի հարավարեւելյան կողմում 1929թ. հիմնադրվեց Նոր Խարբերդ ավանը: Ներկայիս քաղաքատիպ ավանի առաջին բնակիչները հիմնականում խարբերդցիներն էին:

**Մալաթիայի հայկական եկեղեցու վերանորոգման գումարն արդեն հատկացվել է**

**Սկիզբ**

**ՄԴՀԿ-ն ստեղծում է սիրիահայերի օգնության արագ արձագանքման խումբ 26 Հունիսի 2012**



Հրանտ Դինքի ծննդավայրում՝ Մալաթիայի Չավուշօղլու թաղամասում գտնվող հայկական Սուրբ Երրորդություն եկեղեցու վերանորոգման գումարն արդեն դուրս է գրվել Մալաթիայի նահանգապետարանի հատուկ վարչության կողմից:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Մալաթիայի նահանգապետարանի խորհրդի որոշմամբ՝ գումար է հատկացվել Մալաթիայի Սուրբ Երրորդություն (Թաշհորն) եկեղեցու և վերանորոգման կարիք ունեցող մի շարք այլ կառույցների համար: Որոշման մեջ չի նշվել, թե ինչ գումար է հատկացվել եկեղեցու վերանորոգման համար:

Նշենք, որ Մալաթիայի Սուրբ Երրորդությունը գործել է մինչև 1915-ը, որից հետո մինչև 1940-ը եղել է զինվորական պահեստ, այնուհետ մատնվել բախտի քմահաճույթին:

Եկեղեցու վերանորոգման անհրաժեշտության մասին դեռևս 2002-ին բարձրաձայնել էր Հրանտ Դինքը: 2010-ին եկեղեցին վերանորոգելու ցանկություն էր հայտնել «Թեփեֆաշը» մզկիթներ կառուցող հիմնադրամը, որը վերանորոգման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու դիմումն ուղարկել էր Մշակույթի և տուրիզմի նախարարություն, սակայն ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով ծրագիրը չի իրականացվել:

Մոտ մեկ տարի տևած նախագծային աշխատանքներից հետո Մալաթիայի նահանգապետարանը եկեղեցու վերանորոգման նախագիծը հաստատման համար 2012-ի փետրվարին ներկայացրել է Սվասի (Մեբաստիա) մշակույթային արժեքների պահպանության շրջանային խորհուրդ և ստացել դրական պատասխան: Նախագծի հավանության արժանանալուց հետո Մաշակույթի և տուրիզմի նախարարությունը միջոցներ է հատկացրել եկեղեցու վերականգնման համար այն գրանցելով վերանորոգման անհրաժեշտ շինությունների ցանկում:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Հայաստանի Վարչությունը ուշիուշով հետևում է Սիրիայում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններին: Սիրիայի մեծ քաղաքներում բնակվող հազարավոր մեր հայրենակիցներն ամեն օր քնում և արթնանում են ռուսների, կրակոցների տակ՝ մշտապես վտանգելով իրենց կյանքն ու առողջությունը:

Չնայած դրան ՄԴՀԿ-ին պարբերաբար բողոքներ են հասնում, որ դեպի Հալեպ կատարվող հայկական ազգային ավիափոխադրողի «Արմավիայի» տոմսերը շուրջ կրկնակի թանկացել են, ավելին դրանք մտել են այսպես կոչված «սև շուկա»: Փաստորեն, որոշ անհատ ձեռներեցներ որոշել են օգտվել իրենց հայրենակիցների անելանելի վիճակից և այս կերպ լցնել իրենց առանց այդ էլ լցված գրպանները: Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը վճռականորեն բողոքում է ստեղծված իրավիճակի դեմ, կոչ անում պատկան մարմիններին օր առաջ լուծել այս խայտառակ իրավիճակը, որն արդեն իսկ հասցրել է վրդովմունքի ալիք բարձրացնել ոչ միայն սիրիահայության, այլ նաև ողջ հայության շրջանում: Հասկանալով, որ այս պահին հնարավոր չէ պետականորեն ամբողջությամբ լուծել խնդիրը, ՄԴՀԿ-ն հայտարարում է, որ պատրաստ է իր համեստ ջանքերը ներդնել Մայր Հայրենիք ժամանող սիրիահայության ժամանակավոր կեցության և ապրուստի հարցերը լուծելու առումով: ՄԴՀԿ Կենտրոնական գրասենյակում ստեղծվել է արագ արձագանքման խումբ, որը Սիրիայից Հայաստան ժամանող ցանկացած մեր հայրենակցի պատրաստ է հնարավորինս աջակցել: Ավելին, մենք պատրաստակամ ենք համագործակցել պատկան մարմինների հետ՝ մեր հայրենակիցներին օգնելու և գորավիզ լինելու հարցում:

ՄԴՀԿ կոնտակտային տվյալներն են՝ [sdhparmenia@gmail.com](mailto:sdhparmenia@gmail.com), [sdhk1887@mail.ru](mailto:sdhk1887@mail.ru)  
095 50 1887

Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Վարչություն Ատենապետ Գ. Պերկուպերկյան



**Միջազգային**

**ԱՍԱԼԱ-ն գգուշացնում է Թուրքիային**



Օգոստոս 20, 2012

Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը (ԱՍԱԼԱ) հայտարարություն է տարածել Միրիահայության եւ տարածաշրջանի ժողովուրդների նկատմամբ Թուրքիայի ոտնձգությունների կապակցությամբ:

Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է. «Միրիայի հայ համայնքի անվտանգությունն ու անդորրը սպառնացող թուրքական որեւէ ռազմական արկածախնդրություն, ուղղակի կամ անուղղակի որեւէ ոտնձգություն, հանդիպելու է մեր համարժեք հակադեցությանը»:

Անգլերենով հրապակված հայտարարությունում, որ արձագանքվել է հայ եւ օտար մամուլի կողմից, ԱՍԱԼԱ-ն նշում է.

«Թուրքիայի դավադիր եւ թշնամական քաղաքականությունը դրացի երկրների դեմ հասել է իր գագաթնակետին, ինչը բացահայտորեն՝ տարածաշրջանում ամբողջական մեկուսացման է առաջնորդում նրան:

Իրաքի գերիշխանության դեմ ծավալվող ոտնձգությունները, Միրիայի արյունալի տագնապում ուղղակի ռազմական միջամտությունը, Հայաստանի դեմ կիրառված քսանամյա շրջափակման շարունակությունը, Իրանի դեմ դավադիր եւ երկդիմի քաղաքականությունը, Կիպրոսի եւ Հունաստանի տարածքային ամբողջականության դեմ չդադարող, հերթական գրգռիչ ոտնձգությունները եւ քյուրտ ժողովրդի դեմ օրեօր աճող բարբարոսային հալածանքը, տարածաշրջանում Թուրքիային վերածել են դավադրությունների եւ անկայունության հրահրման կեդրոնի», շեշտում է ԱՍԱԼԱ-ն եւ ասյա հավելում. «Թուրք մտավորականությանն ու առաջադեմ հանրությանը զգուշացնում ենք, որ սեփական պատմության սեւ էջերի հետ հաշտվելու եւ այլ ժողովուրդների իրավունքները հարգելու փոխարեն, թուրքական իշխանությունների կողմից հարեւան երկրների նկատմամբ ցեղասպանական եւ թշնամական քաղաքականության շարունակությունը եւ Օսմանյան արյունախում կայսրության

վերակենդանացման երազանքներ փայփայելը, միմիայն ավելացնելու են դրացի ժողովուրդների մոտ թուրք հասարակության դեմ կուտակված դարերի արդար ատելությունն ու թշնամանքը»:

«Մեր համերաշխությունն ենք հայտնում տարածաշրջանի բոլոր ժողովուրդների հետ եւ հայտարարում, որ արաբ ժողովուրդը ինքը պիտի որոշի իր ճակատագիրը, կերտի իր ապագան եւ պետք չունի թուրք իշխանությունների կոկորդիլոսյան արցունքներին եւ երկդիմի հոգատարությանը»- ասվում է Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ), հաղորդագրությունում:

**Աթաթուրքը հա՞յ է. նոր պնդումը ալեկոծել է Թուրքիան**



Օգոստոս 20, 2012

Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հոգեգավակ Ուլքու Ադաթեփեի մահից օրեր անց Թուրքիայում ուժեղացել են խոսակցությունները, թե Աթաթուրքը կամ հայ է, կամ՝ քուրդ:

Աթաթուրքի հոգեգավակ Ուլքու Ադաթեփեն 2007 թվականին Հանրապետության օրվան նվիրված երեկոյի ժամանակ հայտնել էր, թե Աթաթուրքը ծնվել է Մալաթիայում, իսկ Մալոնիկ է տեղափոխվել ավելի ուշ:

Այս մասին գլխավոր էջում է անդրադարձել թուրքական Radikal-ը՝ հիշեցնելով նաեւ այն, որ այս տարվա օգոստոսի 1-ին ավտովթարի զոհ դարձած Աթաթուրքի հոգեգավակը տարին երկու անգամ այցելում էր Մալաթիա: Նա հենց Մալաթիայում էլ հայտարարել էր, թե Աթաթուրքը Մալաթիայից է տեղափոխվել Մալոնիկ՝ պնդելով, թե այդ մասին լսել է հենց Աթաթուրքի տանը:

Այս պնդումներն ավելի են ուժեղացել նաեւ այն բանից հետո, երբ գրող Ֆաթիհ Բայիանը հայտարարեց, թե 1997-ից աշխատում է «Աթաթուրքի մեծ գաղտնիքը» գրքի վրա, որտեղ կարելու տեղեկություններ են լինելու:

Մոցկայքերում ավելի շատ կենտրոնացած են այն մտքի վրա, որ Աթաթուրքը կամ հայ է, կամ՝ քուրդ, քանի որ Մալաթիայում ճնշող մեծամասնություն են կազմել հայերն ու քրդերը:

Հրանտ Դինքն ավելի վաղ հայտնել էր, որ Աթաթուրքի հոգեգավակ, Թուրքիայի առաջին կին օդաչու Մաբիհա Գյոքչենը ցեղասպանությունից փրկված հայուհի է, ում Աթաթուրքը վերցրել էր մանկատնից:

Բացի այդ, Աթաթուրքը ժամանակին մտերմություն է արել հայտնի լեզվաբան, Թուրքիայի այբուբենի ստեղծող Հակոբ Մարթայանի հետ, ում Աթաթուրքի առաջարկով շնորվել է «Դիլաշար» պատվանունը:

Որքան էլ զարմանալի է, Աթաթուրքի ստորագրության հեղինակը նույնպես հայ է՝ Հակոբ Չերչյանը, ում 90-ամյա որդին՝ Տիգրան Չերչյանը մի քանի անգամ հաստատել է այս փաստը նշելով, որ ստորագրության համար Աթաթուրքը իրենց շնորհակալական նամակ է ուղարկել:

Արթուր Հակոբյան  
Իրանա-ադրբեջանական սահմանին զինված միջադեպ է տեղի ունեցել. կա վիրավոր  
17 Օգոստոսի 2012

**Իրանա-ադրբեջանական սահմանին զինված միջադեպ է տեղի ունեցել, որի հետևանքով մեկ մարդ է վիրավորվել է:**

Ինչպես հայտնում է APA գործակալությունը՝ ադրբեջանական Շահիրյար գյուղի մերձակայքում սահմանապահների կողմից նկատվել է ծանրոցներով 5 մարդ, որոնք Ադրբեջանի տարածք են անցել Իրանից:

Ըստ ադրբեջանական աղբյուրի՝ Իրանից տեղափոխվածները փորձել են մաքսանենգ ճանապարհով թմրանյութ անցկացնել: Փոխարձագության ընթացքում նրանք փորձել են փախչել, սակայն չկողմնորոշվելով տեղի ռելիեֆի պայմաններում, վերադարձել են: Միջադեպից հետո դեպքի վայրից հայտնաբերվել է 66 կգ օփիում տեսակի թմրանյութ: Սահմանապահները նույն ընթացքում նկատել են նաև «Մերսեդես» մակնիշի մեքենայի մեջ թաքնված 3 մարդու: Վերջիններիս ևս ձերբակալվել են. բոլորը ձերբակալվածները եղել են Ադրբեջանի քաղաքացիներ:

**Եմենում խաչել են քրիստոնեություն ընդունած տղամարդուն**

16 Օգոստոսի 2012

Եմենում խաչել են այդ երկրի քաղաքացի Յուսեֆ Ամրանին միայն այն բանի համար, որ վերջինս հրաժարվել է մուսուլմանությունից և ընդունել քրիստոնեություն:

Վերջինիս խաչված նկարը արագորեն տարածվել է ինտերնետում, աշխարհի քրիստոնյա հոգևոր առաջնորդները սկսել են կոչ անել միջազգային հանրությանը վերջ տալ Եմենում նման վայրագություններին:

HayNews.am

**Հասարակական**

**ԹՈՒՐԲԻԱՆ,  
ՍԻՈՆԻՉՍԸ,  
ՄԱՍՈՆՆԵՐԸ**

ԵՎ

**Հ Ա Յ Ո Ց Ց ԵՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*ԳԱՍՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ*

**ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԸ  
(ՖՐԻՄԱՍՈՆՆԵՐԸ). ԱՇԽԱՐՀԻ  
ԱՄԵՆԱՀՁՈՐ ԳԱՂՏՆԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ,  
ՆՅՈՒ ՅՈՐՔ, 2001**

(Հատված)

*Արևմտյան հայտնի հետազոտող Ջասպեր Ռիլլին հեղինակ է բազմաթիվ ուսումնասիրությունների («Անգլիայի պատմություն», «Գարիբալդի», «Նապոլեոն III և Եվգենիե», «Հենրի VIII», «Էլիզաբեթ I», «Տիտո», «Մուսոլինի» և այլն): Ստորև ներկայացվում է մի փոքրիկ հատված նրա մեծածավալ ուսումնասիրությունից, որում բացահայտ նշվում է հայոց ցեղասպանության մեջ մասունների մեղսակցության մասին (էջ 216-218):*

... Բլեանտի Սկալիերիսը (թուրքերեն՝ Բլեանտի Սկալյերի) հարուստ հույն բանկիր էր ազնվական ընտանիքից, որը ծնվել էր 1833 թվին, Կ.Պոլսում: Նա 1863 թ. ընդունվեց մասունական ժողովարան, որը հիմնադրվել էր Կ.Պոլսում ֆրանսիական «Մեծ Արևելք» օբյակի կողմից: Նա և Միդիատ փաշան ընկերներ էին: Միդիատ փաշան բարձրաստիճան պաշտոնյա էր Սուլթանի կառավարությունում, որը երիտթուրքերի գաղտնի ղեկավարն էր: Միդիատ փաշան ընդունվեց մասունների շարքը, երբ նա Անգլիայում ուսանող էր: Թուրքիա վերադառնալուց հետո նա նշանակվեց Դ-անուրի շրջանի կառավարիչ և հիմնեց մի վարչակարգ, որում չկար կրոնական հետապնդում: 1872 թ. կարճ ժամանակով նա մեծ վեզիր էր՝ թուրքական կառավարության գլխավորը:

Սկալիերիսը և Միդիատ փաշան կարող էին ցուցաբերել իրենց ազդեցությունը արքայազն Մուրադի վրա, որը սուլթան Աբդուլ Ազիզի զարմիկն էր և գահաժառանգը: Մուրադը համակրանքով լսեց նրանց առաջադիմական-լիբերալ հայացքները և նրանց առաջարկով 1872 թ. դարձավ մասուն՝ միանալով հունախոս մասունական ժողովարանին Կ.Պոլսում, որը գտնվում էր ֆրանսիական «Մեծ Արևելք» օբյակի իշխանության ներքո: Մինչ 1876 թ. տեղի էր ունենում բուլղարական ապստամբությունն ընդդեմ թուրքական իշխանության, Ռուսաստանը պատրաստ-վում էր պատերազմել Թուրքիայի հետ՝ բուլղարներին պաշտպանելու համար: Այս ընթացքում Միդիատ փաշան իրագործեց մի հաջողված քայլ. գահից գցեց Աբդուլ Ազիզին և արքայազն Մուրադին հռչակեց Սուլթան՝ Մուրադ 5-րդ անունով:

Այժմ Թուրքիայի սուլթանը մի մտածող մասն էր, բայց մի քանի ա-միս անց նրան ևս գահընկեց արեցին և գահ բարձրացրին բռնակալ Աբ-դուլ Համիդ 2-րդին: Իր 33 տարվա թագավորության ժամանակ նա ձեռք բե-րեց միջազգային վատ համբավ և՛ իր դաժան կառավարման, և՛ իր անձ-նական կյանքում սեքսուալ անկարգությունների համար: Սկզբից նա պահեց Միդհատ փաշային որպես մեծ վեզիր, բայց հետո հրամայեց նրան սպանել: Նա Մուրադին բանտարկեց: Սկսվեցին փորձեց կազ-մա-կերպել Մուրադի փախուստը, բայց ազատման փորձը տապալվեց: Մուրադը մահացավ 1904 թ՝ պահվելով որպես բանտարկյալ 28 տարի :

Աբդուլ Համիդը շարունակեց թագավորել մինչև 1909 թ., երբ նրան գահընկեց արեցին և երիտթուրքերի հեղաշրջումից հետո բանտարկեցին: Երիտթուրքերի առաջնորդը Թալեաթ բեյն էր, որը հետագայում ստացավ Մեհմեդ Թալեաթ փաշա անունը: Նա մասն էր և դարձավ թուրքական «Մեծ Արևելք» օբյեկտի մեծ վարպետը: 1917թ. նա նշանակվեց մեծ վեզիր, երբ Թուրքիան և իր աջակիցները՝ Գերմանիան և Ավստրիան, սկսեցին պարտ-վել առաջին համաշխարհային պատերազմում: Որպես թուրքական կառավարության անդամ՝ նա հայերի կողմից պատասխա-նա-տու էր համարվում ցեղասպանության և իրական Հայաստանի թուր-քական մահաճգնեղանակի բնակչության ոչնչացման համար: Երիտթուրքերից շա-տե-րը մաստններ էին, բայց ո՛չ նրանց առաջադեմ հայացքները Թուրքիա-յի մոդեռնիզացիայի մասին, ո՛չ էլ մատնական սկզբունք-նե-րը չկանխեցին Հայաստանում ցեղասպանության ծրագրին նրանց աջակցությունը (ընդգծումը մերն է - խմբ.):

Երբ Թուրքիան պատերազմում պարտվեց, Մեհմեդ Թալեաթ փա-շային 1918 թ. հոկտեմբերին ստիպեցին հրաժարվել մեծ վեզիրի պաշտոնից: Հաջորդ տարի նա մեկնեց Թուրքիայից և գնաց ապրելու Բեռլին-ում: 1921թվին նա Բեռլինում սպանվեց մի հայ ուսանողի կողմից, որը չէր մոռացել եղեռնը :

Պատերազմի պարտությունից հետո Թուրքիայում հայտնված առաջնորդը Մուստաֆա Քեմալն էր, որն անվանվում էր Քեմալ Աթաթուրք: Նա մասն էր, որն ընդունվել էր Մակեդոնիայում իտալական մա-տ-նական օբյեկտ : Նա թուրքական բանակի հրամանատա-րու-թ-յունը վերց-րեց, երբ հաղթանակ էին տարել դաշնակիցները. Բրիտանիան եռանդով, ֆրանսիան զգուշությամբ լիազորեց հունական բանակին ներխուժել Թուրքիա, հարկադրել Թուրքիային ընդունել դաշնակիցների խաղաղության ժամկետները: Հույները թուրքերին հետ մղեցին 250 մղոն դեպի Սաքարիա գետը, այնտեղ Մ. Քեմալը կանգնեցրեց նրանց, հետո նրանց ուղեկցեց ողջ ճանապարհը դեպի Միջերկրական ծով և Թուրքիայից դուրս: Գա հույների համար աղետալի միջամտություն էր և նրանք եր-բեք չներեցին Քեմալին և թուրքերին՝ իրենց ազգի էթնիկական ոչնչացման համար Իզմիրում (Չմյուրնիայում), քանի որ բոլորը դուրս էին թշվել: Քեմալը շարունակում էր ոչնչացնել սուլթանի իշխանությունը և իսլաիֆաթը՝ Թուրքիան վերածելով ոչ կրոնական հանրապետության և բարգավաճում բերել երկրին, այն պատերազմներից և միջազգային դաշնակիցներից զերծ պահել:

16 տարի որպես դիկտատոր ղեկավարելուց և շատ վիսկի խմելուց հետո նա 1938 թվին մահացավ՝ իշխանության գլուխ լինելով...

Շար. 3 եւ վերջ

## Մշակույթ

### ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Սուլթանական Թուրքիայի ռազմաֆեոդալական կրոնիկի տակ գնալով ավելի էր ծանրանում մոտ 2,5 միլիոն հայության վիճակը Արևմտյան Հայաստանում, որտեղ հայ բնակչությունը ենթարկվում էր ամենադաժան հա-լածանքների և շահագործման: Գյուղացիներն այնտեղ վճարում էին ավելի քան 20 տեսակ տուրքեր ու հարկեր: Դաժան ճնշումներից ու հալածանքներից ազատվելու ձգտումների համար հայերը ենթարկվում էին մասսայական ջարդերի և բռնի տեղահանության: Նրանք ստիպված թողնում էին հայրենի երկիրը և ապաստան որոնում աշխարհի տարբեր երկրներում:

Հայ ժողովրդի այն մասը, որ ապրում էր Արևելյան Հայաստանում, Անդրկովկասի և Ռուսաստանի այլ վայրերում, համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում գտնվելով հանդերձ, Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ մեկտեղ ենթարկվում էր կալվածատերերի, վաշխառուների, բուրժուազիայի ու ցարիզմի ճնշումներին:

Ռուսաստանի տարբեր քաղաքներում, հատկապես Պետերբուրգում եւ Մոսկվայում սովորող հայ ու վրացի երիտասարդությունը ամբողջովին կլանված էր պայքարի ու ազատագրության գաղափարներով: Ռուս ուսանողության բուռն ելույթներն ու հեղափոխական շարժումների աճը մեծ տպավորություն էին թողնում անդրկովկասցի ուսանող երիտասարդության վրա: Այդ դեպքերի մասնակից Նիկո Նիկոլաձեն հետաքրքիր տվյալներ է բերում անգրկովկասցի ուսանող երիտասարդության գաղտնի խմբակի գործունեու-թյան մասին: Խմբակն ուներ դրամարկը, գրադարան, րնկերական դատարան, գործում էր ըստ կանոնադրության և նրա զլուխն էր կանգնած կոմիտեն:

1861 թ, հոկտեմբերի 12-ին Պետերբուրգի համալսարանում բռնկվեցին ուսանողական ուժեղ հուզումներ, որոնց ակտիվ մասնակիցներն էին նաև վրացի և հայ երիտասարդները:

Յարևական կառավարությունը դաժան հաշվեհարդար տեսավ ըմբոստ ուսանողների հետ: Նրանցից 240 հոգի, այդ թվում 19-ը Անդրկովկասի ուսա-նող երիտասարդներ՝ վրացի) 7 հայ, ձերբակալվեցին, Վասիլի Սվանցիլի, Միքայել Ավետիսով, Նիկո Նիկոլաձե, Արել Չոլոկաշվիլի, Գավիթ Գոգոբերիձե, Գավիթ Արդուշելիշվիլի, Գրիգորի Չավելիշվիլի, Ալեքսանդր Շավերդով, Յակով Իսարով, Վասիլի Թումանով և ուրիշներ:

Մեծ թվով անդրկովկասցի ուսանողներ են մասնակցել նաև 1861 թ. Մոսկվայում տեղի ունեցած հուզումներին, նրանց շարքում էին Մերգել Թումանյանը, Նիկոլայ Միանսարյանը և ուրիշներ: Անդրկովկասցի ուսանողների գաղտնի խմբակները գործում էին մեծ մասամբ «փոխօգնության դրամարկի» անվան տակ, որին անդամագրվելու համար պահանջվում էր 5 անդամի երաշխավորություն: Պարզ է, որ հարցը վերաբերվում էր քաղաքական անլեզալ կազմակերպության, որը և կսպ էր պահպանում Չերնիշևսկու հետ:

Ուսիկանությանը հաղորդված տվյալներից երևում է, որ 1862 —1866 թթ. ռուսական հեղափոխական խմբակների մասնակցելու համար 17 անդրկովկասցի ուսանողներ անվստահելի են ճանաչվել, նրանցից էին վրացիներ՝ Վ. Չերքեզիշվիլին, Խ. Սավանցիլին, Գ. Մեզվինցի, Ս.



Ծերեթեյին, Գ. Գոգոբերիձեն, եւ Անդրնիկաշվիլին, հայեր՝ Ի. Իսաբովը, Ի. Անանովը, Գ. Չերքեզյանը, հույներ՝ Կոնդրյովները, ռուսներ՝ Կուզմինները եւ Ն. Կալինինը, աղբրեջանցի՝ Փ. Մ ուստաֆաևը:

Ուշագրավ է, որ անդրկովկասցի ուսանողների ընդհատակյա հեղափոխական խմբակները կազմակերպվում էին ինտերնացիոնալ սկզբունքներով: Այդպիսին էր ուսանող Նիկոլայ Կիպիանու կազմակերպած խմբակը, որի կազմում էին Վ. Չերքեզիշվիլին, Գ. Աբդուշելիշվիլին, Ս. Մեսիսին, Կ. Ալիխանովը, Ն. Կանանովը, Իսահակյանը եւ ուրիշները: Անդրկովկասցիները համաձույլ էին ռուս, լեհ եւ այլ ազգերի հեղափոխական գործիչների հետ, գիտակցում էին ինտերնացիոնալ միասնության անհրաժեշտությունը համընդհանուր պայքարում:

1866-1867 ուսումնական տարում Նովորոսիսկի (Օդեսայի) համալսարանի անվտանգի ուսանողների շարքում ուսուցանության ցուցակներում անդրկովկասցիներից նշվում են Ի. Էրիստավիլի, Ֆ. Դոլբեշիձեն, Է. Լազարևի, Մ. Տեր-Ակոպովի, Թ. Մաչավարիանիի եւ ուրիշների անունները:

Համառուսաստանյան ուսանողական շարժումների ղեկավար գործիչների շարքում եւ անդրկովկասցիները կարևոր դեր էին կատարում: 1868 —1869 թթ. Պետերբուրգի ուսանողության կողմից 59 հոգու ստորագրությամբ համալսարանական ծանր կարգերի փոփոխման ռեֆորմ պահանջող բողոքագրի տակ Ս. Նեչակի, Վ. Դեբազոր-Մոկրեչի եւ մյուսների հետ ստորագրել էին նաև Ա. Սարաջիշվիլին, Վ. Շավերդովը, Արդոթիսկին, Ե. Իոսելիանին, Խաչատուրովը եւ Ե. Ավետիսովը: Անդրկովկասցի ուսանողները դատավարության ժամանակ համարձակորեն հայտարարեցին, որ լրիվ գիտակցությամբ են մասնակցել հուզումներին, ուստի ոչ մի ափսոսանք չեն արտահայտում, ընդհակառակը, հետագայում չեն հրաժարվի ուսանողական հավաքություններին մասնակցելուց, Ջարապովը, Կիպիանին, Մուլիխանիշվիլին եւ Շավերդովը հեռացվեցին համալսարանից, գրկվեցին ուսումը շարունակելու իրավունքից եւ ուսուցանության հսկողության տակ արտրվեցին Անդրկովկաս:

Շար.14

**Խոհեր**

**Մեր Անցած Ճամբան**

*Թ. Ղարախանյան Սիրակցի*

Այս ճանրից՝ շոյված , բացակայեցինք : Քիչ անց ղեկավարվեցինք հսկա ուտելիքի սեղանի եւ զինվորական կարգապահությամբ սնվեցինք եւ ամեն 3 հոգի իր ղեկավարով զինվորական «Ջիփ» մտելով ճամբա ընկանք դեպի մեր գյուղերը: Մտա մեկ ժամից հասանք առաջին ծառայության գյուղ ՄԱՄՈՒԱՆ պարսկերենով Մահմուդե, որը 1946-ին լրիվ հայաթափ եղավ, բարեբախտաբար ներգաղթելով Մովետական Հայաստան: Գյուղը մոտենալիս նկատեցինք որ արդեն գյուղապետը եւ մի քանի ծերուկներ գյուղի առաջ այսպես կոչված «Գալի Դուռ»-ում սպասում էին իրենց գյուղին նշանակված մտագավորական հրամանգրով վարժված եւ մասնագիտացած ծառայող զինուորական-ուսուցչին: «Ջիփ»-ը կանգնեց գյուղի առաջ քահրիզից եկող առվակի պարզ ու վարար ջրի ափին եւ կարմիր ալյուտով սարքված գույգ ապակի պատուհաններով դպրոցի մտա: Աղյուսից սարքած այս շենքը 1946 ներգաղթից առաջ Չարմահալի հայ ուսումնասիրաց մյուսյունը սարքել էր իբև ճրի բուժարան բոլոր շրջակայքի հայության համար եւ բժշկության ծառայությունը վճարում էին Չարմահալի Միության ֆոնդից:

Մեր ղեկավարը իջնելով ջիպից մեզ էլ նշան արեց իջնենք եւ մտնենք գյուղապետին ծանոթացրեց Մամուռան գյուղի զինվոր-ուսուցչին: Բարի գալստյան եւ հարգանքի խօսքեր

ասվեցին, կնիկները փախան կորան բայց տղամարդիկ բազմացան, շատացան եւ գյուղը գրկաբաց ընդունեց իր զինվոր-ուսուցչին, իմ պարսիկ ռազմընկերոջ՝ ԱԼԻ ԻՐԱՆՓՈՒՌ-ին:

Մեր ղեկավարը միանալով գյուղի ընդառաջող խմբին տեղավորեց իր զինվորին նշանակված եւ հատկացրած իր տանը եւ վերադարձավ Ջիփ-ի մնացած երկուսիս մեր նշանակված գյուղերը հասցնելու:

Այս պատկերը մեր երկու ջահել ու անփորձ զինուորի համար մտքի հանգստություն տուեց եւ երկուսս էլ տաք ու ջերմ զգացումով շարժեցինք արևմուտք դեպի երկուսիս ծառայության գյուղերը նախ ինը Աղբուլաղ եւ մյուս ռազմընկերոջս Մամուրա: Մեր ղեկավարը իմ գյուղի մասին շատ չնչին խոսեց ու անցավ բայց ընկերոջս նշանակված Մամուրա գյուղից շատ խոսեց ասալով “որ այդ գյուղում դեռ հատ ու կենդ հայեր կան, գյուղապետի անունն էլ ՄԿՐՏՈՒՄ Քալանթար է, ասում են խելացի ու արդար”: Հարցրի արդյոք Մամուրա գյուղն էլ իր դպրոցն ունի, ասավ «այո» հայերի գնալուց հետոյ ՄԿՐՏՈՒՄ Քալանթար-ն գյուղի հայ ու պարսիկ ժողովուրդին հաւաքեց եւ իբրեւ մի սիրող ընտանիքի հայր խրատեց, սիրեց եւ հրահանգեց ամենքը իրենց աչքը դպրոցի վրա պահեն, որ օտար դրացի գյուղերի նման չքանդեն: Երկու զինվորներս էլ հանդարտ լսեցինք եւ բան չհարցրինք: Ջիպը մեզ վեր ու վար գցելով եւ ճանապարհի հողոտ փոշուտ օդը շնչելով, արդեն հատ ու կենդ կանաչ ծառերի մէջ գյուղի էինք մոտենում եւ մեր ղեկավարը խոսեց «ին համ Աղբուլաղ - ահա Աղբուլաղ գյուղ»:



Վանիկ Բաղդասարյան

**Թամար Փանոսյան  
Հայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی

تالیف تامار پانوسیان

**51- Ծանր ծովը գցելով, ծովը չի պղծվի:**

دریا به دهان سگ نجس کی گردد.

**52- Չեռքս ցավա լավ է քան բերանս:**

**Բերանը ցավելու տեղ, թող ոտքդ ցավի:**

کس نکند بجای تو آنچه بجای خود کنی.

**53- Անունը կա, արդյունքը չկա:**

پز عالی و جیب خالی .

**54- Խորովածը չկերանք, ծխից քոռացանք:**

آش نخورده دهان سوخته

**55- Էնենց արա որ ոչ՝ խորովածն էրվի, ոչ՝ էլ շամփուրը:**

کاری بکن بهر ثواب نه سیخ بسوزد نه کباب